

ՄԻՆԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՂԱՐՇԿԵՐՏՑԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐ, ԳՐԻՉ ԵՎ ՔԱՐՈՉՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Բանալի բառեր՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցի, Մինաս արքեպիսկոպոս, Գևորգ եպիսկոպոս, մատենագիր, միաբան, նվիրակ, գրիչ, ձեռագիր, Քարոզգիրք, քարոզ, տաղ:

Հոգվածի նպատակն է քննել Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունը, որն ընդօրինակված է ՄՄ 3830 ձեռագրում, պարզաբանել կենսագրական որոշ տեղեկություններ:

Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մասին կենսագրական տվյալները կցկտուր են. ՄՄ 3830 ձեռագրի՝ 1780 թ. գրչության ժամանակի գլխավոր հիշատակարանից պարզ է դառնում, որ նա այդ ժամանակ էջմիածնի միաբան և Կոստանդնուպոլսի ծայրագույն նվիրակ¹ է եղել: Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Մինաս Վաղարշկերտցի» անուն-ազգանունով արքեպիսկոպոս հայտնի չէ: Գյուլտ Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» հատորներում՝ նշված ժամանակաշրջանում² գրված նամակներում բազմաթիվ են «Մինաս վարդապետ», «Մինաս եպիսկոպոս», «Մինաս արքեպիսկոպոս» բնորոշմամբ անձինք, սակայն «Մինաս արքեպս. Վաղարշկերտցի» ձևակերպում մեզ չհաջողվեց գտնել: Նույնը կարելի է ասել նաև Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ի էջերում հանդի-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտաշխատող, hiritsyan@gmail.com, հոգվածը ստանալու օրը՝ 5 ապրիլի, 2025, հոգվածը գրախոսելու օրը՝ 8 հունիսի, 2025:

¹ Նվիրակն այն հոգևորականն է, ով կաթողիկոսը որևէ կարևոր հանձնարարությամբ կամ դրամական նվիրատվություն հավաքելու նպատակով որոշ ժամանակով ուղարկում է այլ երկիր:

² Մինաս Վաղարշկերտցու ապրած մոտավոր ժամանակը ճշտելու համար հիմք ենք ընդունել 1780 թվականը՝ կենսագրական այլ տվյալ ձեռքի տակ չունենալու պատճառով: Վերցրել ենք ժամանակային ամենալայն հատվածը, որում հնարավոր է, որ նա ապրած ու գործած լինե: 1780-ից հանել ենք 100 տարի, եթե ենթադրենք, որ կարող էր ապրած լինել մինչև 100 տարեկան, ինչը փչ հավանական է, բայց բացառված չէ, և 2-րդ տարբերակը՝ 1780-ին գումարել ենք 80 տարի, եթե ենթադրենք, որ այդ ժամանակ եղել է առնվազն 20 տարեկան (որը կրկին փչ հավանական է՝ 20 տարեկանում լինել հոգևոր հայր և ուսուցիչ, նաև արքեպիսկոպոս): Այսպիսով՝ աղբյուրներում Մինաս Վաղարշկերտցուն փնտրել ենք մոտավորապես 1680-1860 թթ. ժամանակաշրջանում:

պող բազմաթիվ «Մինաս» անունով անձանց մասին՝ իրենց վարդապետական աստիճաններով հանդերձ, որոնցից ոչ մեկը չունի «Վաղարշկերտցի» մականունը:

Պարզ է, որ Գյուտ Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» հատորներում և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ի՝ նույն ժամանակաշրջանում հիշատակվողներից մեկը պետք է որ լինի խնդրո առարկա Մինաս արքեպս. Վաղարշկերտցին, ինչը կփորձենք որոշ տեղեկությունների և պատմական փաստերի համադրմամբ մանրամասնել հոգւվածում: Ժամանակաշրջանի այլ աղբյուրներում ևս «Վաղարշկերտցի» մականունը չի հանդիպում. հիշատակվում են հիմնականում «Մինաս վարդապետ» բնորոշմամբ միաբաններ կամ նվիրակներ, և ներկայացվում է վերջիններիս գործունեությունը:

Սույն հոգւվածի հիմնական նպատակն է ներկայացնել Մինաս արքեպս. Վաղարշկերտցուն իբրև մատենագրական նյութերի՝ հիմնականում քարոզների հեղինակի, ձեռագրական նյութերի ժողովողի, դասակարգողի, գրչի: Եթե նույնիսկ նա նույնանում է վերը նշված որևէ անձի հետ, միևնույն է՝ Մինաս վարդապետի, Մինաս եպիսկոպոսի կամ Մինաս արքեպիսկոպոսի հեղինակությամբ մատենագրական ժառանգության մասին որևէ տեղեկություն հայտնի չէ: Ժամանակաշրջանի գրագրություններում վերը նշված անձինք հիշատակված են որպես միաբան կամ նվիրակ, ովքեր լուսաբանվում են պատմական իրադարձությունների համատեքստում՝ իրենց աշխատանքային պարտականությունների առիթով միայն: Ուստի չափազանց հետաքրքիր ու անչափ կարևոր է վերհանել այդ անձանց՝ նաև մատենագրության բնագավառում արված աշխատանքներն ու ներդրումները, ցույց տալ նրանց գործունեության նաև այդ կողմը: Այսինքն՝ նրանք վարչարարական աշխատանքներին զուգահեռ կարողացել են ժամանակ գտնել ու զբաղվել նաև մատենագրական գործունեությամբ: Ավելին՝ նրանց ունեցած ներդրումը մատենագրության մեջ ևս փաստում է, որ նվիրակներից շատերը պատահական մարդիկ չէին. նրանք ժամանակի գրագետ և բազմակողմանի զարգացած անձինք էին, և երբեմն նրանց էր պատկանում որևէ հարցի վերջնական լուծման բանալին:

ՄՄ 3830 ձեռագրում ընդօրինակված են Մինաս արքեպս. Վաղարշկերտցու բազմաթիվ գործեր: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ՄՄ 3830 ձեռագրի պատվիրատուն հենց ինքը՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին է, իսկ գրիչն իր աշակերտ Գևորգ սարկավազը, որի հայտնած տեղեկությունների հիման վրա էլ պարզ են դառնում պատվիրատուին վերաբերող համառոտ տեղեկությունները: ՄՄ 3830 ձեռագրում կան պատվիրատուի՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու հեղինակությամբ գործեր՝ հիմնականում քարոզներ՝ «Նորին Մինասայ» ձևակերպմամբ: Հավելենք, որ ՄՄ 3830 ձեռագրում ևս բացակայում է «Վաղարշկերտցի» մականունը. որպես քարոզների և այլ բնագրերի հեղինակ՝ վերջինս բնորոշվում է միայն որպես «Նորին Մինասայ...», իսկ գրչության ժամանակի

գլխավոր հիշատակարանում՝ «Մինաս արհիեպիսկոպոս և աստուածաբան վարդապետ»։ ՄՄ 3830 ձեռագրի քարոզների հեղինակին այլ ձեռագրական աղբյուրներում գտնելու փնտրտուքների արդյունքում պարզվեց, որ ՄՄ 2808 ձեռագրում ևս պահպանված են նույն հեղինակի քարոզներն՝ էլ ավելի մեծ թվով (այլ գրչի՝ Բրաբիոնի ընդօրինակմամբ)։ ավելին՝ ձեռագիրն ունի տիտղոսաթերթ, որտեղ որպես քարոզների հեղինակ նշված է՝ «Մինաս Վաղարշկերտցի»։ Հեղինակի հիշատակարաններից մեկը ևս նույնությամբ կրկնվում է նշված երկու ձեռագրերում։

ՄՄ 3830 ձեռագրում եղած՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մնացած նյութերը (քարոզները ներառյալ) Մատենադարանի հավաքածուի այլ ձեռագրերում գտնելու ակնկալիքով փորձեցինք փնտրել մի քանի սկզբունք հաշվի առնելով՝ հեղինակի անվան արձանագրում, բնագրերի համեմատություներ և այլն, ինչի արդյունքում Մինաս Վաղարշկերտցու գործերն ընդգրկող ձեռագրերի թիվը հասավ 10-ի։ Նշենք կարևոր մի հանգամանք ևս, որ տվյալ ձեռագրերից մի քանիսում ընդհանրապես չի հիշատակվում Մինաս արքեպս. Վաղարշկերտցին՝ իբրև այդ գործերի հեղինակ։ Այդ գործերի մեծ մասը նրա անվան բացակայության պատճառով հաճախ համարվել է Անանուն հեղինակների գործեր։

Ներկայացնենք այդ ձեռագրերի ցանկը³։

Մինաս Վաղարշկերտցի, ձեռագրեր

1. ՄՄ 828 – Ժողովածոյ, 1770, 1777 թթ., Ամիթ, էջմիածին։ Գրիչ՝ եղիա տրց. Տիարպէքրցի (1770 թ.), Բարսեղ սրկ. (1777 թ.)։ Ստացող՝ Գրիգոր վրդ. (1777 թ.)։

2. ՄՄ 1002 – Մինաս արքեպիսկոպոս, Յաղագս արարողութեան եւ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ, ԺՁ դար (= ԺԸ դար), էջմիածին (գրիչ նշված չէ)։

3. ՄՄ 1258 – Ժողովածոյ, ԺԸ դար (տեղ և գրիչ նշված չեն)։

4. ՄՄ 1837 – Ժողովածոյ, ԺԸ դար (1740-ից յետոյ), էջմիածին (գրիչ նշված չէ)։

5. ՄՄ 2227 – Մինաս Վաղարշկերտցի, Քարոզք, ԺԸ դար (տեղ և գրիչ նշված չեն)։

6. ՄՄ 2228 – Մինաս Վաղարշկերտցի, Գիրք քարոզութեան, Հատոր երկրորդ, 1799 թ., էջմիածին։ Գրիչ, ստացող՝ Գէորգ եպս.։

³ Ձեռագրերի արտաքին նկարագրության տվյալներն՝ ըստ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» («Ընդարձակ ցուցակ»), իսկ վերջին երեքը («Ընդարձակ ցուցակ»-ում դեռևս անտիպ)՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» («Համառոտ ցուցակ») հատորների։ Ուղղագրությունը պահպանել ենք։

7. ՄՄ 2808 – Մինաս Վաղարշկերտցի, Քարոզք, 1781-1782 թթ., Կոստանդնուպոլիս: Գրիչ՝ Բրաբիոն:

8. ՄՄ 3830 – Ժողովածոյ, 1780 թ., Կ. Պոլիս: Գրիչ՝ Գէորգ սրկ.: Պատվիրատու⁴ Մինաս արքեպս.:

9. ՄՄ 6412 – Մինաս Վաղարշկերտցի, Քարոզգիրք, 1788 թ., Կ. Պոլիս (գրիչ նշված չէ):

10. ՄՄ 9644 – Մինաս Վաղարշկերտցի, Քարոզգիրք (Հատոր Բ), 1799-1800 թթ., Կ. Պոլիս: Գրիչ՝ Գէորգ արքեպս.: Ստացող՝ Յօհաննէս Ակնեցի:

Հիմք ընդունելով ՄՄ 3830 ձեռագրի 1780 թվականը, երբ Մինաս Վաղարշկերտցին նվիրակ և արքեպիսկոպոս է եղել Կոստանդնուպոլսում, նաև վերը թվարկած ձեռագրերի հիշատակարաններից որոշ հուշող բնորոշումներ՝ փորձեցինք նախ պարզել, թե Գյուտ Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» հատորներում և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ում հիշատակված նույնանուն անձանցից ո՞ր մեկը կլինի Մինաս արքեպս. Վաղարշկերտցին:

Գյուտ Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» մեջ ոմն Մինաս արքեպիսկոպոսի ուղղված նամակներից մեկի խորագրում շեշտվում է վերջինիս աստվածաբան վարդապետ լինելը՝ «Տեառնդ Մինասայ սրբազան արքեպիսկոպոսի եւ աստուածաբան վարդապետի. Ողջոյն կարօտալի...»⁵, ինչը նշանակում է, որ վերջինս մեծ հավանականութամբ կարող է լինել մատենագրական ժառանգություն ունեցող Մինաս արքեպիսկոպոս Վաղարշկերտցին: ՄՄ 2228 ձեռագրում կա լրացուցիչ այսպիսի մի տեղեկություն. գրչության ժամանակի գլխավոր հիշատակարանում (1799 թ.) Գեորգ եպիսկոպոսը գրում է, որ Մինաս Վաղարշկերտցին արդեն ծեր էր, երբ գրում ու սրբագրում էր քարոզները (294բ): Այս տեղեկությունը համադրելով Գյուտ Աղանյանցի հատորներում ներառված նամակներից մեկում ոմն Մինաս արքեպիսկոպոսի մահվան մասին ծանուցման հետ, պարզում ենք նաև Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մահվան հստակ թվականը: Այսպես՝ նամակներից մեկը վերնագրված է «Թուղթ երկրորդ

⁴ Տվյալը «Համառոտ ցուցակ»-ի նկարագրության համեմատ հավելյալ է. ՄՄ 3830 ձեռագրի գրչության ժամանակի հիշատակարանում Գեորգ սարկավազը գրում է, որ բնագրերն ընդօրինակելու հարցում իրեն մեծապես օժանդակել է Մինաս արքեպիսկոպոսը. «... եթէ ոչ եւ տուեալ ձեռն օգնականութեան մերումս տկարութեան մերս հոգեւոր հայր եւ մշտաշխատ, անձանձիր ուսուցիչ տէր Մինաս առատիմաստ վարդապետն եւ արհիեպիսկոպոսն, որ կարի հոգացաւ ի ժողովումն աստուածային բանիս եւ ետ մեզ ի գրել յաւելեալ ի վերայ եւ գորս յիւրմէ ըստ տուելոյն իւրեան շնորհաց յԱստուծոյ Հոգոյն... » (437բ. այստեղ և այսուհետ՝ մեջբերումների ընդգծումները մերն են՝ Հ. Ի.):

⁵ Գ. Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ե., Դանիել կաթողիկոս (1800-1808), Թիֆլիս, 1902, էջ 23, նույն նամակը ներառված է նաև՝ Գ. Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, Գիրք Թ., Յովսէփ կաթողիկոս Արղուսեան (1778-1800), Թիֆլիս, 1911, էջ 315:

առ Յովսէփի կաթուղիկոսն ի գործակալաց Սրբոյ Աթոռոյս յիշումն յառաջ գրեալ թղթոյն հրաւիրանաց եւ ծանուցումն զմահուանէ Մինաս արքեպիսկոպոսին, եւ խնդիր ստիպաւ անյապաղ գալ ի Սուրբ Աթոռ»⁶, որում նշվում է. «... զհոգևոր Հայրն մեր՝ զՄինաս ծերունափայլ արքեպիսկոպոսն, զոր թողեալ էաք ի թեթև հիւանդութեան, գտաք յայնժամ ի տագնապի ծանրագոյն ցաւոց... և ինքն երանելին ևս իբրև իմացաւ զհրաւէր մահուն, պատրաստեցաւ խոստովանութեամբ և հաղորդութեամբ: Եւ յամսոյս ԻՔ. ի չորրորդ ժամու ցերեկին աւանդեաց զսրբասնեալ զհւր հոգին առ Աստուած...»: Որպէս այս նամակի գրութեան ժամանակ նշված է 1800 թվականը. «Գրեցաւ յամի Կենարարին՝ 1800 և ի հոկտեմբերի 10. ի Սուրբ Էջմիածին», ինչը նշանակում է, որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին մահացել է 1800 թ. հոկտեմբերի 22-ին⁷: Նույն այդ նամակում խոսվում է նաև նրա՝ աշխատասեր և իմաստուն վարդապետ լինելու մասին. «Արդ, Տէր մեր սրբազան զկնի վախճանման հոգելոյս Հայրապետին երկու պատուական ծերք էին աստանօր ի սուրբ գահին՝ աշխատաւորք և օգտախոհք և բարեջանք. առաջին սոյն այս յիշատակեալս՝ խոհական բանաւոր և իմաստուն վարդապետ...»: Մեկ այլ նամակում՝ վերնագրված «Թուղթ Մինասայ արքեպիսկոպոսի առ Դանիէլ»⁸, առավել հստակեցվում է նամակագրի՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու հետ նույնացումը, քանի որ Մինաս արքեպիսկոպոսը խոսում է իր աշակերտ Գևորգ վարդապետի մասին, որը վերը բազմիցս հիշատակված Գևորգ եպիսկոպոսն է: Մինաս արքեպս. Վաղարշկերտցին այս նամակը գրել է մահից ամիսներ առաջ՝ 1800 թ. ապրիլի 23-ին՝ «... և այս փոքր գրութիւն, մեծ երևեսցի առաջի մեծութեանդ, և ընդ յարգանս եղիցի՝ նաև յանձն առնեմ քեզ զԳէորգ վարդապետ որդեակն իմ. ողջ լեր ի յողջ գլուխն Քրիստոս և ի սէր ծերացեալ Մինաս վարդապետիս...» (էջ 48)⁹:

⁶ Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Ե., Դանիէլ կաթողիկոս (1800-1808), էջ 54-58, նույն նամակը ներառված է նաև՝ Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Թ., Յովսէփի կաթողիկոս Արղութեան, (1778-1800), էջ 338-341:

⁷ Քանի որ 1799 թ. նա ծեր էր, շատ հավանական է, որ 1800 թ. մահացած Մինաս արքեպիսկոպոսը հենց Վաղարշկերտցին է: Այսպիսով՝ մասամբ հստակեցվում է Մինաս արքեպս. Վաղարշկերտցու ապրած ժամանակը՝ [≈1710]-1800 թթ.:

⁸ Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Ե., Դանիէլ կաթողիկոս (1800-1808), էջ 46-48:

⁹ Առավել մանրամասն ուսումնասիրությունների և պրպտումների արդյունքում պարզվեց նաև, որ Գ. Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» հատորներից մեկում 1778 թ. կատարված իրադարձությունների շարքում առկա է այսպիսի խորագիր՝ «Յղէն սրբազան վեհին զվաղարշկերտցի Մինաս վարդապետն ի նուիրակոսին մեծին Պօլսոյ, և ընդ նմա բազում թողոք» (Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք ԺԱ., Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը (1777-1779), Թիֆլիս, 1913, էջ 227), որով հստակեցվում է, որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին 1778 թ. (մահվանից 22 տարի առաջ) է ուղարկվել Կոստանդնուպոլիս որպէս նվիրակ: Իսկ մինչ այդ, ըստ Գ. Աղանյանցի մեկ այլ հիշատակության, հավանաբար

Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ի «Անձնանունների ցանկ»-ում (ցանկերը կազմվել են հետագայում) առանձնացված է էջմիածնի երկու Մինաս եպիսկոպոս՝ 1. «եպիսկոպոս եւ էջմիածնի նուիրակ ի Կ. Պոլիս», 2. «եպիսկոպոս էջմիածնի եւ կաթողիկոսական տեղապահ»¹⁰: Առաջին Մինաս եպիսկոպոսի առիթով «Ազգապատում»-ում¹¹ ասվում է, որ 1781 թ. էջմիածնից ինչ-որ թուղթ են ուղարկում Կ. Պոլսում գտնվող նոր նվիրակ Մինաս եպիսկոպոսին (էջ 3633), կամ այլ առիթներով պարզապես շեշտվում է նրա՝ Կ. Պոլսում նվիրակ լինելը (էջ 3688, 3733): Երկրորդ Մինաս եպիսկոպոսը «Ազգապատում»-ի էջերում հիշատակված է իբրեւ կաթողիկոսական տեղապահ (էջ 3747, 3769, 3783): Ուշագրավ է, որ 1799 թ.՝ Ղուկաս Ա. Կարնեցու մահից հետո, նոր կաթողիկոսի թեկնածուների թվում հիշատակվում է նաև կաթողիկոսական տեղապահ Մինաս արքեպիսկոպոսը, սակայն տեսողության խնդրի պատճառով նրա հարցը վերանայում են. «... կաթողիկոս ըլլալն ալ անհնար էր, աչքի տեսութիւնը կորուսած էր» (էջ 3739): Մաղաքիա Օրմանյանի նշած տվյալները համադրելով ենթադրում ենք, որ «Անձնանունների ցանկ»-ում առանձնացված երկու տարբեր Մինաս եպիսկոպոսները, ամենայն հավանականութեամբ, նույն մարդն են՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին՝ սկզբում որպէս Կոստանդնուպոլսի նվիրակ, հետագայում՝ էջմիածնի կաթողիկոսական տեղապահ: Մաղաքիա Օրմանյանն ավելի ուշ այլ առիթով անդրադառնում է Մինաս արքեպիսկոպոսի մահվանը ևս՝ հղում անելով Գլուտ Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան»՝ վերը նշված նամակին. «... ետքը գրուած պիտի չ'ըլլայ, վասնզի իբր կենդանի յիշուած Մինաս տեղապահը վախճանած է հոկտեմբեր 22-ին, ի չորրորդ ժամու ցերեկին (Դի. Թ. 339)» (էջ 3770):

Ինչ վերաբերում է ձեռագրերի վերոբերյալ ցանկին, Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունն ընդգրկող ձեռագրերից հստակ թվագրված վաղագույնը ՄՄ 1837-ն է (1740-ից հետո), իսկ ամենատույնը՝ ՄՄ 9644-ը (1799-1800 թթ.): Մնացած ձեռագրերն ունեն մոտավոր թվագրում՝

Մինաս Վաղարշկերտցուն նվիրակության են ուղարկել Բայազետ: Այսպես՝ «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը (1763-1767)» խորագիրը կրող բնագրում առկա է հետևյալը. «Պատրաստեաց ապա սրբազան Վեհն զորեսին նուիրակունս ի յառաքել: ԶԱշտարակեցի Ռեթնս վարդապետն ի յԱպահան, զՋուղայեցի Ստեփաննոս վարդապետն ի Գիլան, զԿալակերտցի Յակոբ վարդապետն ի Նախիջևան, և զՎաղարշկերտցի Մինաս վարդապետն ի Բայազետ...» (Գ. Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, Գիւթ Գ., Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 318):

¹⁰ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հ. Գ., Յանկեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 348 (Յանկ անձնանուններ): Անուղղակի հղումների էջերն այսուհետ կից՝ փակագծերում:

¹¹ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հ. Բ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001 (վերահրատարակություն):

ԺԸ դար: Ցավոք, այդ ցանկի որևէ ձեռագրում Մինաս արքեպս. Վաղարշկերտցին նշված չէ իբրև գրիչ: Տվյալ ձեռագրերն ունեն կամ այլ գրիչներ, կամ ընդհանրապես բացակայում է գրչի անունը: Այնուամենայնիվ, չենք բացառում, որ գրչի անվան հիշատակություն չունեցող այդ ձեռագրերից մեկը կարող է գրված լինել հենց Մինաս Վաղարշկերտցու ձեռքով¹²:

Չնայած նրան, որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու ձեռքով ամբողջական ձեռագիր գրված լինելու որևէ փաստ առայժմ չունենք, այնուհանդերձ ձեռագրերից մի քանիսում առկա են **հեղինակի և գաղափար օրինակի** հիշատակարաններ, որոնց շնորհիվ կարելի է պատկերացում կազմել, թե ինչպիսի գրիչ է նա եղել: Այսպես՝ ՄՄ 3830 և ՄՄ 2808 ձեռագրերում պահպանված է նրա այս հիշատակարան-ցուցումը. «Տե՛ս, ո՛ր բարեմիտ վարդապետ, զի այս յետին բաներս համառօտ գրեցի, որոց միտքն ընդլայնելն քեզ դիւրին է, ուրեմն զմեզ անբանբաս թողլով աշխատեաց, եղբայ՛ր, քանզի մեք միայն զբառսն կարճեցաք, իսկ միտքն ընդարձակ է. եւ ո՛ղջ լեր՝ ի սէր եղբօր քոյ՝ Մինասայ՛ բանիցս շարօղ վարդապետի» (ՄՄ 3830, 381բ և ՄՄ 2808, 102ա):

Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունը ներառում է քարոզներ (նաև՝ «առաջաբանություն քարոզից»), ճառեր, տաղեր, ողբեր, աղոթքներ, զանազան այլ չափածո և արձակ բնագրեր: Ընդ որում, եթե ավելի վաղ թվագրում ունեցող ձեռագրերում գերակշռում են միմյանց հետ բովանդակային ընդհանրություն չունեցող առանձին բնագրեր՝ տաղեր, ողբեր, աղոթքներ և այլն (որոնք ընդօրինակվել են հիմնականում ժողովածուներում), ապա ավելի ուշ թվագրում ունեցող ձեռագրերում ընդօրինակված են միայն քարոզներն ու ճառերը (այս դեպքում ամբողջ ձեռագիրը ներառում է միայն Մինաս արքեպիսկոպոսի գործերը)¹³:

Մինաս արքեպս. Վաղարշկերտցու հեղինակությամբ՝ վերը նշված ձեռագրերում շատ են նաև տաղերը: Հեղինակը «Համառոտ ցուցակ»-ի «Անձնանունների ցանկ»-ում հենց այդպես էլ բնորոշված է՝ «ԺԸ դարի տաղերգու»¹⁴: Սա-

¹² Վերը թվարկած ցանկի ձեռագրերում երևում է նաև Մինաս արքեպս. Վաղարշկերտցու և Գևորգ եպիսկոպոսի հոգևոր (նվիրապետական) աստիճանների աճը ժամանակի ընթացքում՝ Մինաս արքեպիսկոպոսի և Գևորգ սարկավագից մինչև Գևորգ եպիսկոպոս:

¹³ Քանի որ սույն հոդվածի նպատակը Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունն ընդհանուր գծերով ներկայացնելն է, նաև նրան առնչվող որոշ ուշագրավ իրողությունների վերհանումը, բարոյների և ճառերի բովանդակային հարցերին կանոնադաշտնափակվելի ուշ առանձին հոդվածով, իսկ բնագրերը կպատրաստենք հրատարակությամբ:

¹⁴ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մուսականյանի, Երևան, 1965, էջ 1539:

կայն, բացի այս աղբյուրից, որևէ այլ տեղ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու՝ տաղերգու լինելու կամ գոնե որոշ տաղերի հեղինակ լինելու մասին արձանագրում առկա չէ¹⁵:

Մինաս արքեպս. Վաղարշկերտցու անունը («Նորին Մինասայ... » ձևով) տաղերին կից առկա է ՄՄ 3830 ձեռագրում. տաղերը ներառող այլ ձեռագրերում (որոնք, ինչպես նշեցինք, մեծ մասամբ ժողովածուներ են) վերջիններս ընդօրինակված են հիմնականում առանց հեղինակի անվան արձանագրման, ըստ այդմ էլ՝ տաղերի գերակշիռ մասը համարվել է Անանուն հեղինակների գործեր կամ երբեմն վերագրվել այլ հեղինակների: Նշված տաղերի համեմատությունը ՄՄ 3830 ձեռագրի՝ խորագրում հեղինակի անունը կրող տաղերի հետ ցույց տվեց, որ դրանք նույնպես Մինաս Վաղարշկերտցու գործերն են: Ըստ այդմ՝ այդպես ևս ընդլայնվեց ձեռագրերի այն ցանկը, որոնցում ընդօրինակված են Մինաս արքեպս. Վաղարշկերտցու բնագրերը: Նույնը կարելի է ասել նրա այլ գործերի մասին: Այսպես՝ ձեռագրերից մեկը (ՄՄ 1002), որտեղ առկա է ոմն Մինաս արքեպիսկոպոսի հետևյալ բնագիրը՝ «Յաղագս արարողութեան եւ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ», «Ընդարձակ ցուցակ»-ում թվագրած է ԺՁ դարով¹⁶, սակայն բնագրի համեմատությունը ցույց տվեց, որ այն միանշանակ Մինաս Վաղարշկերտցուն է, ինչը նաև նպաստեց ձեռագրի ժամանակը ճշգրտելուն՝ ԺԸ դար¹⁷:

Մինաս արքեպս. Վաղարշկերտցու տաղերի մեծ մասը աստվածաբանական, խոհական բնույթի է. ըստ բովանդակության կարելի է առանձնացնել աղոթքներ, ողբեր և այլն (ընդհանուր բնորոշմամբ՝ «բանք չափաւ», ինչպես ընդունված է խմբավորել ձեռագրերում նմանատիպ գործերը, որ նշանակում է՝ «չափածո նյութեր»):

Մինաս արքեպս. Վաղարշկերտցին, որպես տաղերգու, ուշագրավ նորամուծություն է արել. նա իր տաղերի մեծ մասում կիրառել է բանաստեղծական չափատողերը դասավորելու յուրօրինակ մի հնարք: Տաղերի քառատողերը գրված

¹⁵ Փորձեցինք նրան փնտրել նաև հետևյալ հրատարակություններում՝ *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)*, Երկու հատորով, աշխատասիրությամբ՝ Հ. Սահակյանի, Երևան, 1986 (հ. առաջին), 1987 (հ. երկրորդ) և Պ. Մ. Խաչատրյան, *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.)*, Երևան, 1969, բայց քանի որ այդ ուսումնասիրությունները հասնում են մինչև 17-րդ դարը ներառյալ, ուստի Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մասին որևէ այլ տեղեկություն գտնել չհաջողվեց:

¹⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ., կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթաքեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քչի. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեւրիկեանը, Երևան, 2008, էջ 12:

¹⁷ «Համառոտ ցուցակ»-ում տվյալը ճիշտ է. տե՛ս *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Ա., էջ 457:

են հետևյալ օրինաչափություններով: այսպես՝ քառատողի 1-ին տողը (հորիզոնական) և քառատողի 4 տողերի առաջին բառերը (ուղղահայաց) նույնն են, սա վերաբերում է նաև 2-րդ՝ հորիզոնական տողին և քառատողի 4 տողերի երկրորդ բառերին, և այս տրամաբանությունը՝ մինչև վերջ: Այսինքն՝ տաղերի բառերը գրված են սյունակատիպ, որտեղ և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց կարդալու դեպքում ստանում ենք նույն կապակցություն-միտքը:

Առավել հասկանալի լինելու համար ստորև առանձնացնենք նրա՝ այդպիսի գրված տաղերից մեկը, որն ինքնին Մինաս արքեպս. Վաղարշկերտցու հիշատակարան կարելի է համարել: Այս հնարքի առանձնահատկությունները տեսանելի դարձնելու նպատակով պահպանել ենք ոչ միայն բնագրի ուղղագրությունը, այլև կետադրությունը (ընդգծումները և շեղումները մերն են՝ Հ. Ի.):

Առձանագիրն է իմ ի հիւանդութեանս գրեալ (ՄՄ 3830, 337բ. տե՛ս նկ. 1)

Ջորգիս ընկալ մայր իմ նախծին	ընկալ պահեա՛ կենաց անծին	մայր իմ կենաց տո՛ւր զիս բաժին	նախծին. անծին. բաժին. լե՛ր իմ:
Մինաս խղճուկ օտար ական	խղճուկ մահուամբ գոյժ տայ ունկան	օտար գոյժ տայ լսօղ մարդկան	ական. ունկան. մարդկան. խիստ գան:
Ո՛հ ճոխ անուամբ որ վարդ և պետ	անուամբ գիտուն գործով տգէտ	որ վարդ գործով նա՛ ողջ հոգւով	և պետ. տգէտ. հոգւով. անպէտ:
Հագար հարիւր տասնեակդ և մի	երկիր ոչխարսդ ես եմ մոլի	տասնեակ ես եմ դրամս պակասս	և մի. մոլի. պակաս. խնդրի:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը քառատողերի միայն առաջին բառերն է գրել մեծատառով, քառատողի մնացած 3 տողերի սկզբները գրել է փոքրատառերով, որպեսզի ուղղահայաց ընթերցումը ևս խնդիր չլինի: Նաև՝ քառատողերի հորիզոնական տողերը տրոհել է միջակետերով, միայն վերջին տողը՝ ավարտել վերջակետով: Քանի որ այս հնարքը պահանջում է հստակ օրինաչափություն, միտքը տեղ-տեղ արհեստական է ստացվել: Մինաս Վաղարշկերտցին հարմարեցրել է բառերը և հանգերը, ուստի նրա այս և նմանատիպ մյուս տաղերի շարադրանքը երբեմն փոքր-ինչ անհասկանալի ու կցկտուր է: Նշված տաղ-հիշատակարանում հստակ պահպանված են այս հնարքի օրինաչափությունները՝ քառատողերի բոլոր տողերը՝ և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց, բառացի նույնն են, միայն վերջին քառատողում «Հազար երկիր տասնեակ և մի» տողի փոխարեն գրված է՝ «Հազար հարիր տասնեակդ և մի» ուղղահայաց տարբերակը¹⁸: Նաև՝ այս հնարքի արդյունքում ոչ միայն քառակուսակերպ է ստացվում կապակցություն-միտքը՝ հորիզոնական և ուղղահայաց, այլև քառատողերի բառերը կրկնվում են նաև անկյունագծով. այսպես՝ յուրաքանչյուր քառատողի 4-րդ տողի սկզբի բառը կրկնվում է որպես 1-ին տողի վերջին բառ, նաև կրկնվում են 3-

¹⁸ Ինչպես տեսնում ենք, տարբեր են միայն «հարիր» և «երկիր» բառերը, հնարավոր է՝ շփոթի հետևանքով: Իսկ եթե ենթադրենք, որ դա միտումնավոր է արված, առաջին տողը (հորիզոնական) կարող է լինել նաև տաղ-հիշատակարանի գրչության թվական՝ «Հազար երկիր տասնեակ և մի» (1211) + 551 (չնայած բացակայում է «Հայոց թվական» նշումը) = 1762: Ձի բացառվում, որ Մինաս Վաղարշկերտցին այդ թվականին գրած լինի տաղը: Իսկ երկրորդ տողը՝ «Հարիր ոչխարդ ես եմ մոլի», վերաբերում է ավետարանական հարյուրերորդ «մոլորյալ ոչխարի» փրկության առակին (Մատթ. 18, 12-14, Դուկ. 15, 3-7): Այս հատվածը գրչության թվի և հոգևոր ժամանակներում՝ մինչ երկրորդ Գալուստը մարդու ապաշխարությանն առնչվող խորհրդական թվերի՝ 100-ի, 10-ի և 1-ի ներհյուսման շատ հետաքրքիր օրինակ է: Հեղինակը սրանով, ամենայն հավանականությամբ, փորձում է իր երկի ստեղծումը՝ գրչության թվականը կապել հավերժության մեջ իր փրկության հետ: Առակի բովանդակությունը, որտեղ խոսվում է, թե մի՞թե հովիվը մեկ ոչխար միայն կորցնելով, չի թողնի մնացյալ 99-ին՝ այդ մեկին գտնելու ու վերադարձնելու համար, և գտնելուց հետո չի կանչի բարեկամներին ու հարևաններին, ուրախանալու համար, դարձյալ՝ Քրիստոս ինքը մեկնում է իր առակը՝ 99-ը արդարների համար այնպիսի ուրախություն չի լինելու երկնքում, ինչպես մի ապաշխարող մեղավորի համար: Հաջորդ երկու տողերն էլ վերաբերում են տասը և մեկ թվերի խորհրդական մեկնությանը՝ ըստ Ավետարանական պատումի (Դուկ. 15, 8-10): Քրիստոս ասում է՝ կինը երբ տասը դրամ ունենա և մեկը կորցնի, արդյո՞հ որագ չի վառի, չի մաքրի տունն ավելով՝ այն գտնելու համար, և գտնելով, չի կանչի բարեկամներին ու հարևաններին՝ ուրախանալու համար իր կորցրած դրամի վրա. այդպես հրեշտակների ներկայությամբ ուրախություն է լինելու մեկ ապաշխարող մեղավորի փրկության համար («Հարիր ոչխարդ ես եմ մոլի») տողի՝ ավետարանական հարյուրերորդ «մոլորյալ ոչխարի» փրկության առակի հետ կապելու մեր վարկածի հաստատման, նաև բերված լրացուցիչ տեղեկությունների համար շնորհակալ ենք Հայ միջնադարյան երաժշտության ուսումնասիրման խմբի ղեկավար Արուսյակ Թամրազյանին):

րդ տողի 2-րդ և 2-րդ տողի 3-րդ բառերը (բնագրի մեջ 1-ին քառատողի օրինակով կրկին ընդգծել ենք):

Այս կաղապարով Մինաս Վաղարշկերտցին գրել է բազմաթիվ տաղեր, որոնցից յուրաքանչյուրում կիրառված են այս հնարքի օրինաչափությունները: Ինքը՝ հեղինակը, հետևյալ ձևակերպումներով է բնորոշել իր նմանատիպ տաղերը. «Նորին Մինասայ Բան ինչ չափեալ ոտիւք քառակուսի կերտմամբ յիսկ մեք փառաւորեսցուքն» (ՄՄ 3830, 336ա), «Ու՛ր որ նիրհեսդ ի խոր թմբութեան մեղաց՝ ուշիւ ընթերցի՛ր դու զայս անկիւնաւորս: Նորին Մինասայ շարուածք տաղից և տողից՝ ի ցոյց իւրումն ըղձից և ի փառս առ ոյս մտաւոր բան քո» (ՄՄ 3830, 334ա) և այլն: Այս հնարքի կիրառության դեպքեր փորձեցինք գտնել այլ ձեռագրական աղբյուրներում ևս, սակայն «քառակուսի կերտմամբ» և «անկիւնաւոր» բնորոշումներով խորագիր ունեցող տաղերի համեմատությունները ցույց տվեցին, որ դրանք բոլորը Մինաս Վաղարշկերտցու տաղերն են՝ ընդօրինակված հիմնականում առանց հեղինակի անվան հիշատակության: Այս հնարքի կիրառման դեպքեր այլ հեղինակների անվամբ՝ ո՛չ տպագրական, ո՛չ ձեռագրական աղբյուրներում մեզ չհաջողվեց գտնել¹⁹:

Ուշագրավ է այն իրողությունը, որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգության գրի առնվելու և պահպանման գործում չափազանց մեծ է նրա աշակերտ Գևորգ սարկավագի (ավելի ուշ՝ եպիսկոպոս) դերը:

¹⁹ Այս հնարքի կիրառություններ չհաջողվեց գտնել ո՛չ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.) նախորդիվ հիշատակված աշխատության մեջ, ո՛չ ավելի ուշ շրջանի (Մինաս արքեպս. Վաղարշկերտցու ժամանակակից) հեղինակներ Հակոբ Նայյանի ու Պետրոս Բերդույան-Աղամալյանի գործերում: Այս հնարքի հետագա կիրառության դեպքեր չկան նաև հետևյալ հրատարակության մեջ՝ Գ. Գասպարյան, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Երևան, 1979: Ըստ այդմ, մեր ունեցած տվյալների և ուսումնասիրությունների վրա հիմնվելով, կարող ենք փաստել, որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին հայ պոեզիայի մեջ միակն է, որ կիրառել է այս հնարքը: Հնարավոր է, որ նա կարող էր ազդված լինել արևելյան պոեզիայի (մասնավորապես՝ օսմանյան) նմանատիպ օրինակներից, որտեղ հեղինակները, ձգտելով ավելի հնարամիտ երևալ, սպառնելով արդեն եղած հնարքները, փորձում էին կաղապարային ձևերով նոր շունչ հաղորդել տաղերի կառուցվածքին (այս տեղեկության համար շնորհակալ ենք Արևելագիտության բաժնի գիտաշխատող Անի Ժ. Ավետիսյանից), որը, սակայն, արհեստական ու անշունչ է դարձրել այսօրինակ պոեզիան: Դա, ըստ էության, չի բացառվում, քանի որ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին Կոստանդնուպոլսում նվիրակ էր, իսկ նրա ՄՄ 3830 ձեռագրում կան հայատառ թուրքերեն տաղեր ևս: Մինաս Վաղարշկերտցու (որպես ոմն Մինաս վարդապետի) այդօրինակ մի քանի տաղ տպագրվել են ավելի ուշ «Արարատ» ամսագրում (Վաղարշապատ, 1893, թիվ Դ, էջ 355-356, 2, թիվ Ե., էջ 419-421), նույնը տե՛ս նաև «Արարատ»-ի ժառանգությունը Ժ., «Արարատ»-ի բնագիրներ, հ. Բ., Չափածոյք եւ շարականք, Սուրբգրական (անկանոնք), Հատակոտորք ի գրոց հարց եկեղեցւոյ, Կանոնականք, Վարք-վկայաբանութիւնք, Դաւանաբանական-չատագովականք, Թուղթք, Նկարագրութիւնք եւ յիշատակարանք ձեռագրաց, Գրականք, Ալլեւալլք, հրատարակութեան պատրաստեց՝ Ս. Նահապետեան, դասակարգումը, խմբագրումը եւ առաջաբանը՝ Գ. Տէր-Վարդանեանի, Ս. Էջմիածին, 2017, էջ 94, 96:

Ինչպես երևում է տարբեր ձեռագրերում եղած հիշատակարաններից (և՛ Մինաս Վաղարշկերտցու, և՛ Գևորգ սարկավագի), վերջինս է խնդրել իր ուսուցչին գրի առնել մասնավորապես քարոզները և ճառերը: Այսպես՝ ՄՄ 2808 ձեռագրում առկա գաղափար օրինակի հիշատակարանում Մինաս Վաղարշկերտցին նշում է, որ այդ Քարոզգիրքը գրել է իր աշակերտի խնդրանքով հօգուտ «... դեռավարժ և ուսումնասէր մանկանց սրբոյ և մեծի շնորհածաւալ Աթոռոյն էջմիածնի... Որոց և մեր աշակերտաբար գհետ երթեալ ըստ ըղձից մերոց՝ ի խնդրոյ հոգեւոր որդւոյն մերոյ և ուսումնատենչ աշակերտի՝ Գէորգեայ սարկաւագի արարաք զայս գիրքս քարոզից... Զորս նպաստութեամբ բանից հարց սրբոց, ըստ յաջողելոյ ժամանակին և ըստ կարողութեան մերում, իբրև զկաթիլ մի յովկիանոս ծովէ յաստվածային սուրբ գրոց առեալ՝ որպէս զբաժակ մի ջուր ցուրտ յանուն աշակերտի մատուցաք պասքելոց» (ՄՄ 2808, 7աբ): Իսկ արդեն ավելի ուշ՝ 1799 թվականին գրված ձեռագրում (ՄՄ 2228, Մինաս Վաղարշկերտցի, Գիրք քարոզութեան), Գևորգ եպիսկոպոսը (ձեռագրի գրիչն ու ստացողը հենց ինքն է), մանրամասն գրում է, թե ինչպես է իր ուսուցչին խնդրել գրի առնել քարոզները, երբ Մինաս Վաղարշկերտցին Կոստանդնուպոլսում նվիրակ էր: Նա էլ, անսալով իր աշակերտին, կատարել է խնդրանքը՝ չնայած բազմազբաղ և արդեն ծեր լինելուն. «Քանզի հեղինակի գրքոյս, տեսաւս իմոյ՝ տեսաւս Մինասայ աստուածաբան արքեպիսկոպոսին հոգեւոր որդիս եւ սխալոտ ծառայս՝ մինչ էրն նա ի գործ ծայրագոյն նուիրակութեան Սրբոյ աստուածեան Աթոռոյս էջմիածնի ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, գոլով ի սպաս նորին, վասն անկիրթ գոլոյս ի քարոզութիւն ժողովրդեանն. յիւրաքանչիւր ժամանակս թախանձէի զնա՝ առնել ըստ աստուածատուր շնորհացն իւրոց զՔարոզս ի կրթութիւն եւ ի լուսաւորութիւն մտացս, եւ ի շահ եւ յօգուտ աստուածասէր ժողովրդոց: Որ եւ ըստ հայրական գթոյն եւ բարեսէր կամացն իւրոց, բացասելով բազմադիմի զբաղանաց մեծի գործոյն եւ անկարութեան ծերութեանն իւրոյ, կատարէր զհայցուածս եւ գրէր անխափան զցայգ եւ զցերեկ զքարոզս իւրաքանչիւր ժամանակի զպատշաճեալս ի փառս միոյն Աստուծոյ» (ՄՄ 2228, 294աբ):

Հետաքրքիր են նաև վերը տրված ցանկի ձեռագրերում նույն բնագրերի վերնագրերում Մինաս Վաղարշկերտցու անձի բնորոշումները: Ավելի վաղ թվագրված ձեռագրերում Մինաս Վաղարշկերտցին (ինչպես հատուկ է գրիչներին) նվաստացուցիչ մակդիրներով է բնորոշել իրեն, օրինակ՝ «Առաջաբանութիւն քարոզից՝ ի յամենայն դեռավարժ քարոզչաց ասելի, մինչ քարոզն ըստ ուրին յաստուածեանս այս սքանչելանուն գահոյի ասել հանդիպեսցի, յումենէ թմրամիտ Մինաս արեղայէ, սրբոյ գահոյս բնիկ ծառայէ... » (ՄՄ 1837, 121ա), իսկ ավելի ուշ ընդօրինակված ձեռագրերի նույն վերնագրում Մինաս Վաղարշկերտցին բնորոշվել է արդեն այսպես՝ «Առաջաբանութիւն քարոզից՝ ի յամենայն դեռավարժ քարոզչաց ասելի, մինչ քարոզն ըստ ուրին ի յատենի աստուածեանն սքանչելանուն Աթոռոյն Սրբոյ էջմիածնի ասել հանդիպեսցի, տեսաւս Մինասայ

գերիմաստ եւ աստուածաբան վարդապետի ասացեալ» (ՄՄ 2808, 8ա): Այս ամենը կատարվել է Գևորգ եպիսկոպոսի ձեռքով, ընդօրինակելով բնագրերն անմիջապես հեղինակից՝ ի պատիվ իր ուսուցչի, նա արել է նմանատիպ փոփոխությունները, իսկ հետագա ընդօրինակողները պահպանել են այդ ձևակերպումները: Գևորգ եպիսկոպոսը բնագրերի վերնագրերում հետևյալ բնորոշումներով է հիշատակել իր ուսուցչին՝ «Տեառն Մինասայ քաղցրասնոյց վարդապետիս...», «Նորին Մինասայ մեծախորհուրդ վարդապետիս...», «Նորին Մինասայ յոգներախտ վարդապետիս...», «Նորին Մինասայ գորովագուծ եւ յոգնաշխատ վարդապետիս...», «Նորին Մինասայ քաղցրագուծ վարդապետիս...», «Նորին Մինասայ քաղցրասիրտ վարդապետիս...» և այլն: Ձեռագրերի մեծ մասի հիշատակարաններում Մինաս արքեպս. Վաղարշկերտցին և Գևորգ եպիսկոպոսը բազմիցս են միմյանց բնորոշում իբրև «հոգևոր հայր» և «հոգևոր որդի», ինչը ցույց է տալիս ուսուցիչ-աշակերտ անխզելի կապը:


Պետք է նշել, որ Մինաս Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունն ընդգրկող ձեռագրերի հետագա ընդօրինակությունների գործում կրկին մեծ դեր է ունեցել Գևորգ եպիսկոպոսը, քանի որ դրանց մի մասի գրիչն ու ստացողը հենց ինքն է: Հաճախ նա կարևոր ցուցումներ է տվել նաև հետագա ընդօրինակողներին: Այսպես՝ ՄՄ 2228 ձեռագիրը, որ Մինաս Վաղարշկերտցու Քարոզգիրքն է, սկսվում է կիսատ բնագրով ու ԼԳ. պրակով (ՄՄ 2228, 6ա)²⁰ և ունի այսպիսի ցուցում-հիշատակարան. «Գիտութիւն լիցի բարեմիտ ընթերցողացդ, զի հատորիս ի սկզբէն մինչև ցայս վայր եղեալ բանքն ի յայլ տուփ մտին եւ կազմեցան յաղագս փոքրագիր լինելոյ տետրիցս, զի եթէ ի միասին կազմեալ լինէին, գրութիւն գրքոյս ըստ թանձրութեան անյարմար լինելոց էր: Ուստի, եթէ ոք կամիցի օրինակել զգիրքս՝ պարտի ի վերայ մեծագիր տետրից գրել, զի չափաւոր լիցի գրութիւն գրքոյս ըստ երկայնութեան եւ լայնութեանն եւ թանձրութիւնն, եւ ի մի տուփ մտցեն յերկուսին տուփսն եղեալ տետրից բանքն: Զի յերկուսին տուփսն եղեալ բանքն անբաժ ի միմեանց, ի միասին մի գիրք են եւ մի հատոր՝ որպէս բանքն ինքնին յայտ առնեն մեզ ըստ բաժանման գլխոցն եւ ըստ տետրաթուոց եւ թղթահամարից եւ ըստ ցանկին» (ՄՄ 2228, 5բ): Այսինքն՝ քարոզները շատ էին, իսկ ձեռքի տակ եղած ձեռագիրը փոքրագիր, ուստի որոշել են կազմել երկու առանձին ձեռագրով, քանի որ մեկ ձեռագրում ընդօրինակելու դեպքում վերջինս շատ հաստ լինելու պատճառով անհարմար կլինէր կիրառելը: Ի վերջո, բնագրերի մի մասը (առաջին կեսը) ընդօրինակվել է այլ ձեռագրում, իսկ երկրորդ կեսը՝ ներկա ՄՄ 2228 ձեռագիրն է (մեծություն՝ 23 × 19): Մինաս Վաղարշկերտցու քարոզներն ընդօրինակվել են բազմիցս (առկա են այդ հատորների մասերի առանձին ընդօրինակություններ), և այդ ցուցում-հիշատա-

²⁰ Գրչի էջակալումը ևս 519-ից է:

կարանը նույնությամբ կրկնվում է մի քանիսում, այնուամենայնիվ, փորձեցինք ցուցում-հուշումներով, նաև ՄՄ 2228 ձեռագրի էջակալումը, գրչության առանձնահատկությունները և ամենակարեւորը, բնագիրը հաշվի առնելով գտնել բուն առաջին հատորը (առաջին կեսը): Պարզվեց, որ այն ՄՄ 6412 ձեռագիրն է, որում ևս առկա է վերը բերված նմանատիպ ցուցում-հիշատակարան այն մասին, որ վերջինս նույն հատորի առաջին կեսն է (և որ երկրորդ մասն այլ ձեռագրում է գրվել), ու նշված է միևնույն վերը բերված պատճառը (մեծություն 23 × 18): Երկու ձեռագրերը բնագրերի հաջորդականության առումով մեկ ամբողջություն են կազմում (տե՛ս նկ. 2 և 3):



Նկ. 2. ՄՄ 6412, 263բ



Նկ. 3. ՄՄ 2228, 6ա




Նկ. 5. ՄՄ 9644, 203բ-204ա

Երկու ձեռագրի ցուցում-հիշատակարաններում Գևորգ եպիսկոպոսը նշելով Քաղաքի՝ երկու ձեռագրով ընդօրինակելու պատճառը, խնդրում է ապագա գրիչներին, որ հետագայում մեկ մեծագիր ձեռագրի մեջ ընդօրինակեն, քանի որ դրանց բնագրերը մեկը մյուսի շարունակությունն են, անբաժանելի են միմյանցից՝ «մի գիրք են ու մի հատոր»։ Եվ ինչն է առավել ուշագրավ, որ ժամանակ անց հենց ինքն էլ կատարել է այդ երախտապարտ աշխատանքը, որը նույնպես մեզ հաջողվեց գտնել Մատենադարանի հավաքածուում։ Դա ՄՄ 9644 ձեռագիրն է (տե՛ս նկ. 4), որը և՛ մեծագիր է (29,5 × 19,5), և՛ շքեղ կազմովյալ մ. ձեռագիրն ունի ճոխ մանրանկարչություն, ծաղկային դրոշմներով շքեղ լուսանցակողեր, գրված է չափազանց կոկիկ ձեռագրով, ներառում է ՄՄ 6412 (առաջին կես) և ՄՄ 2228 (երկրորդ կես) ձեռագրերի բնագրերն ամբողջությամբ՝ ունի ցանկեր և գրչության ժամանակի հիշատակարան (գրչի, ստացողի)։ Երկու ձեռագրերի հատման կետը ՄՄ 9644 ձեռագրում էջ 203բ-ում է (տե՛ս նկ. 5)։

Նախապես թվում էր, որ ՄՄ 6412 և ՄՄ 2228 ձեռագրերը երկու առանձին հատորներ են՝ Առաջին և Երկրորդ, սակայն ՄՄ 6412 ձեռագրի (որ առաջին կեսն է) տիտղոսաթերթին նշված է՝ Երկրորդ հատոր, այսինքն՝ ՄՄ 6412 և ՄՄ 2228 ձեռագրերը դեռևս Երկրորդ հատորի մասեր են, ու որ պիտի գոյություն ունենա նաև Առաջին հատոր (դա հաստատվում է նաև նրանով, որ նրանցից ընդօրինակված ՄՄ 9644 մեծագրի ձեռագրի տիտղոսաթերթին ևս նշված է՝ Երկրորդ հատոր)։ Գևորգ եպիսկոպոսն այս մասին գրել է ՄՄ 2228-ի գրչության ժամանակի գլխավոր հիշատակարանում. «Իսկ այլ ամենայն քարոզքն եւ որք յառաջմէ եղեալ ասութիւնքն ի մի տուփ ժողովեցեալ, եղեն յատուկ մի Գիրք քարոզութեան, որ կոչեցաւ Հատոր առաջին» (294բ. սկզբնապես թվում էր, թե բուն առաջին կեսը նկատի ունի, այսինքն՝ ՄՄ 6412 ձեռագիրը)։ Փորձեցինք գտնել նաև այդ՝ իրական Առաջին հատորը, որը պարզվեց՝ ՄՄ 2808 ձեռագիրն է (որի տիտղոսաթերթին ևս կարդում ենք՝ Առաջին հատոր)²¹։

Ըստ այնմ՝ այդ ձեռագրերի գծապատկերը կլինի հետևյալը.



²¹ Գևորգ եպիսկոպոսը նշում է, որ այդ երկու հատորներն էլ գրվել են Մինաս արքեպ. Վաղարշկերտցու անմիջական հսկողությամբ։

Ամփոփում. այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ի դեմս Մինաս արքեպս. Վաղարշկերտցուն՝ ունենք մի նոր հեղինակ, որը լինելով էջմիածնի միաբան ու Կոստանդնուպոլսի ծայրագույն նվիրակ, իր բազմազբաղ վարչարարական գործունեության ընթացքում կարողացել է ժամանակ գտնել ու թողնել մատենագրական հարուստ ժառանգություն (Մինաս արքեպս. Վաղարշկերտցու դեպքում մեծ էր նրա աշակերտ Գևորգ եպիսկոպոսի դերը): Այդ մատենագրական հարուստ ժառանգությունը ներառում է քարոզներ, ճառեր, տաղեր, ողբեր, աղոթքներ, զանազան այլ կարևոր բնագրեր: Ավելին՝ Մինաս արքեպս. Վաղարշկերտցին՝ որպես ժԸ դարի հեղինակ-տաղերգու, կարողացել է չափածոյում հմտորեն կիրառել մի նոր հնարք, որով ուշ միջնադարի հայ բանաստեղծության մեջ առաջիններից է, եթե ոչ առաջինը և դեռևս միակը:

Այսքանով սահմանափակում ենք Մինաս արքեպս. Վաղարշկերտցու անձին ու գործունեությանը վերաբերյալ պրպտումները՝ հույս ունենալով, որ այլ աղբյուրներից հետագայում ի հայտ կգան նրա մասին նոր տվյալներ (հենց «Մինաս արքեպս. Վաղարշկերտցի» բնորոշմամբ), որոնք առավել կամբողջացնեն ժԸ դարի՝ այս արդյունաշատ արքեպիսկոպոսի մասին տեղեկությունները:

Նաև՝ հերթական անգամ կարող ենք փաստել ևս մեկ շատ կարևոր հանգամանք, այն, որ Զեռագրագիտության բնագավառը նոր ու շուտամասիրված աղբյուրների անծայրածիր շտեմարան է, և նույնիսկ մեկ ձեռագրի գիտական նկարագրությունը կարող է վերը նշված բազմաթիվ հարցերի ու քննարկումների սկիզբ դառնալ: Դա կարող ենք արձանագրել ՄՄ 3830 ձեռագրի գիտական նկարագրության²² օրինակով: Այդ և հարակից բոլոր ձեռագրերի ուսումնասիրությունից կարելի է առանձնացնել մի քանի ուղղվածություն, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում ենք այժմ.

1. Մինաս արքեպս. Վաղարշկերտցին՝ որպես միաբան և նվիրակ. ուսումնասիրել նրա վարչարարական գործունեությունը և նրա ունեցած դերը էջմիածնի միաբանության մեջ:

2. Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունը. ուսումնասիրել նրա թողած ժառանգությունն առանձին ճյուղերով՝ քարոզները, ճառերը, դրանց առնչություններն իրենից առաջ և հետո եղած նույնաբնույթ երկերի հետ, նրա այլ՝ ոչ պակաս կարևոր բնագրեր:

3. Մինաս արքեպս. Վաղարշկերտցուն ուսումնասիրել իբրև գրչի, ձեռքերի համեմատությամբ գտնել նրա ընդօրինակած ձեռագրերը, տալ դրանց անցած ճանապարհը:

4. Մինաս արքեպս. Վաղարշկերտցին՝ իբրև ժԸ դարի տաղերգու:

²² ՄՄ 3830 ձեռագրի գիտական երկրորդ նկարագրությունն արել ենք «Ընդարձակ ցուցակ»-ի ժԲ հատորի պատրաստման աշխատանքների ընթացքում՝ մեր անելիք հետքական շարքի՝ Հ^{ԿԲ} 3801-3850 ձեռագրերի կազմում:

5. Մինաս արքեպս. Վաղարշկերտցու մատենագրական ժառանգությունը ներառող ձեռագրերի օրինակով ցույց տալ ձեռագրաստեղծման պատմության, ընդօրինակությունների, պատվիրատու-ստացող կապի, նույն բնագրի տարբեր խմբավորումների և այլ իրողությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ:

6. Մինաս արքեպս. Վաղարշկերտցու և նրա աշակերտ Գևորգ եպիսկոպոսի օրինակով ցույց տալ ուսուցիչ-աշակերտ անքակտելի կապը, որն ընդհանրապես մեծ դեր է ունեցել ձեռագրաստեղծման պատմության մեջ:

Ինչպես տեսնում ենք, տվյալ թեմաները դուրս են գալիս Ձեռագրագիտության սահմաններից, և դրանց ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև պատմագիտության, աստվածաբանության, բանասիրության՝ մասնավորապես գրականագիտության՝ զբաղվողների համար:

HASMIK IRITSYAN

ARCHBISHOP MINAS VAGHARSHKERTTS'I - SCRIBE, AUTHOR OF SERMONS AND OTHER WORKS

Key words: Archbishop Minas Vagharshkertts'i, Archbishop Minas, Bishop Geworg, author, monk, ecclesiastical figure, scribe, manuscript, Sermon book, sermon, ode.

The article discusses important information regarding Archbishop Minas Vagharshkerttsi's life and literary legacy. Biographical details about him are sparse because there is no archbishop known by the name "Minas Vagharshkertts'i." In printed sources, there are many references to individuals described as "Priest Minas," "Bishop Minas" or "Archbishop Minas," but "Archbishop Minas Vagharshkertts'i" is not mentioned anywhere. The article attempts to clarify this issue by comparing information from manuscript and printed sources, as well as historical facts. According to this information, Archbishop Minas Vagharshkertts'i was a monk of Etchmiadzin and a representative of the Pontifical Legate of the Mother See of Holy Etchmiadzin in Constantinople in the 18th century. Despite his busy administrative activities, he has left behind a rich literary heritage. It includes sermons, orations, odes, laments, prayers, and other important writings in prose and verse. He was one of the first, if not the first, to apply in his poems a specific technique of "quadratic" composition of quatrains: all the words of the first verse are repeated in the initial position of the three subsequent verses, and the same principle is applied up to the end.

A significant role in recording and later copying the literary works of Archbishop Minas Vagharshkertts'i was played by his disciple, Bishop Geworg.

АСМИК ИРИЦЯН

**АРХИЕПИСКОП МИНАС ВАГАРШКЕРТЦИ - ПИСЕЦ, АВТОР
ПРОПОВЕДЕЙ И ДРУГИХ ПРОИЗВЕДЕНИЙ**

Ключевые слова: Архиепископ Минас Вагаршкертци, Архиепископ Минас, епископ Геворг, автор, монах, церковный деятель, писец, рукопись, Книга проповедей, проповедь, духовные песнопения.

В статье рассматриваются сведения, касающиеся личности и литературного наследия архиепископа Минаса Вагаршкертци. Биографические данные о нём обрывочны, поскольку архиепископ с именем «Минас Вагаршкертци» в известных источниках не упоминается. В печатных источниках часто встречаются имена «вардапет Минас», «епископ Минас», «архиепископ Минас», однако обозначение «архиепископ Минас Вагаршкертци» нигде не зафиксировано. В статье предпринимается попытка прояснить этот вопрос посредством сопоставления сведений, содержащихся в рукописных и печатных источниках, с историческими фактами. Согласно этим данным, архиепископ Минас Вагаршкертци был монахом Эчмиадзина и патриаршим легатом Первопрестольного Святого Эчмиадзина в Константинополе в XVIII веке. Несмотря на активную административную деятельность, он оставил богатое литературное наследие. Оно включает проповеди, речи, духовные песнопения, плачи, молитвы и другие прозаические и поэтические произведения. Он был одним из первых, если не первым, кто применил в стихах своеобразный прием «квадратного» построения четверостиший: все слова первого стиха строфы (по горизонтали) повторяются в начале следующих трех стихов (по вертикали); этот принцип соблюдается до конца произведения.

Особая роль в записи и дальнейшем переписывании литературного наследия архиепископа Минаса Вагаршкертци принадлежит его ученику — епископу Геворгу.